**Հրավեր**
**Հետաքրքրության Հայտ Ներկայացնելու**
**Գործառնական ձեռնարկի թարմացում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ համար և պատրաստում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ համար**, ETNIP-CS-4/2013

Երկիրը՝ **Հայաստան**
Ծրագրի անունը՝ **«Էլեկտրահաղորդման ցանցի հուսալիություն» ծրագրի նախապատրաստման դրամաշնորհ**
Դրամաշնորհ՝ TF0166041

Սույն Հետաքրքրության Հայտ Ներկայացնելու Հրավերը հաջորդում է 2013թ.-ի նոյեմբերի 15-ին UN Development Business և www.gnumner.am (www.procurement.am) էլ.կայքերում տեղադրված Գնումների Ընդհանուր ծանուցմանը:

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից ստացել է դրամաշնորհ «Էլեկտրահաղորդման ցանցի հուսալիություն» ծրագրի նախապատրաստման ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար:

Սույն հրավերով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն հրավիրում է բոլոր շահագրգիռ անձանց ներկայացնել մրցույթին մասնակցելու հետաքրքրության հայտեր: Խորհրդատուի ընտրությունը կկատարվի Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված (թարմացված 2014թ. հուլիս) «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով («Խորհրդատուների ուղեցույց») սահմանված ընթացակարգերով՝ անհատ խորհրդատուի որակավորման եղանակով:

**Անհատ խորհրդատուի աշխատանքի ծավալը՝**

- Թարմացնել «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում մշակված «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գործառնական ձեռնարկը, ներառելով նրանում «Էլեկտրահաղորդման ցանցի հուսալիություն» ծրագրով նախատեսված միջոցառումները
- «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ համար պատրաստի «Գործառնական ձեռնարկ» որը պետք է ներառի «Էլեկտրահաղորդման ցանցի հուսալիություն» ծրագրով նախատեսված միջոցառումները:

Պահանջվող բոլոր հաշվետվությունները և փաստաթղթերը պետք է ներկայացվեն անգլերեն և հայերեն լեզուներով:

**Անհատ Խորհրդատուն պետք է ունենա հետևյալ որակավորումը՝**

- Առնվազն ճարտարագիտության/տնտեսագիտության մագիստրոսի կոչում,
- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ենթակառուցվածքների բնագավառում ծրագրերի մշակման ու կառավարման ոլորտներում: Փորձը էներգետիկայի ոլորտում կդիտվի որպես առավելություն:
- միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ աշխատանքային փորձ,
- անգլերեն և հայերեն լեզուների գերազանց իմացություն (գրավոր և բանավոր),
- համակարգչային հմտություններ:

**Առաջադրանքի տևողությունը**՝ 40 **օր /օրացուցային/**:

Շահագրգիռ անձիք իրենց ինքնակենսագրական տվյալները (CV), հայերեն և անգլերեն լեզուներով, առձեռն կամ էլ.փոստի միջոցով, կարող են ներկայացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Անանյանի անունով **մինչև** 2014 **թվականի հոկտեմբերի** 27-**ը՝ ժամը** 17:30 **հետևյալ հասցեով**.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան,Զորավար Անդրանիկի 1,
Հեռ: +37410-720010; ֆաքս: +37410-720121; էլ.հասցե: hvenprojects@gmail.com;
Լրացուցիչ տեղեկությունների համար, աշխատանքային օրերին ժամը $9^{00}$ - $17^{30}$ զանգահարել +37410 72-02-70, գլխավոր ճարտարագետի տեղակալ Արամ Պետրոսյանին:
Էլ. փոստ hvenprojects@gmail.com